

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

23 հունվար 2015 թ

N 1

**Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ**

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐԿԱՅԻՆ  
ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13.8-րդ հոդվածի համաձայն՝ անձինք համարվում են ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ, եթե բավարարելով օրենքի 13.7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պայմանը, օրենքով սահմանված ժամկետներում իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացրել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով հայտարարություն և ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի դրույթներով և նպատակ ունենալով պարզաբանելու, թե որ փաստաթղթերն են համարվում ընտանիքի անդամ լինելը հիմնավորող փաստաթղթեր, ***պաշտոնապես պարզաբանում եմ.***

1. Անհատ ձեռնարկատերը ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու համար հարկային մարմին է ներկայացնում ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված անձանց ընտանիքի անդամ լինելը հիմնավորող հետևյալ փաստաթղթերը՝

1) ծնող(ներ)ի դեպքում՝ ծնող(ներ)ի անձնագրերի (նույնականացման քարտերի) և անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան վկայականների, անձնագրերի (նույնականացման քարտերի) պատճենները: Եթե ծնող(ներ)ի անունը և/կամ ազգանունը չեն համապատասխանում անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան վկայականում ծնող(ներ)ի անվան և/կամ ազգանվան հետ, ապա ներկայացվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից ծնող(ներ)ի հավաստիացման վերաբերյալ տեղեկանք,

2) ամուսնու դեպքում՝ ամուսնության վկայականի և ամուսինների անձնագրերի (նույնականացման քարտերի) պատճենները,

3) զավակ(ներ)ի դեպքում՝ զավակ(ներ)ի ծննդյան վկայականների, անձնագրերի (նույնականացման քարտերի) և անհատ ձեռնարկատիրոջ անձնագրերի (նույնականացման քարտերի) պատճենները: Եթե ծննդյան վկայականում զավակ(ներ)ի ծնող(ներ)ի անունը և/կամ ազգանունը չեն համապատասխանում անհատ ձեռնարկատիրոջ անվան և/կամ ազգանվան հետ, ապա ներկայացվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից ծնող(ներ)ի հավաստիացման վերաբերյալ տեղեկանք,

4) եղբոր (եղբայրների) դեպքում՝ եղբոր (եղբայրների) և անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան վկայականների և անձնագրերի (նույնականացման քարտերի) պատճենները: Ծննդյան վկայականներում ծնող(ներ)ի անունը և/կամ ազգանունը չհամընկնելու դեպքում ներկայացվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից եղբոր (եղբայրների) հավաստիացման վերաբերյալ տեղեկանք,

5) քրոջ (քույրերի) դեպքում՝ քրոջ (քույրերի) և անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան վկայականների և անձնագրերի (նույնականացման քարտերի) պատճենները: Ծննդյան վկայականներում ծնող(ներ)ի անունը և/կամ ազգանունը չհամընկնելու դեպքում ներկայացվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից քրոջ հավաստիացման վերաբերյալ տեղեկանք:

2. Առևտրային կազմակերպությունները ներկայացնում են ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված անձանց ընտանիքի անդամ լինելը հիմնավորող սույն պարզաբանման 1-ին կետում նշված համապատասխան փաստաթղթերի պատճենները և լիազոր մարմնի կողմից տրված առևտրային կազմակերպության հիմնադիրների (մասնակիցների) և նրանց բաժնեմասերի վերաբերյալ տեղեկանքը:

3. Այլ պետություններում ստացված ռուսերենից և անգլերենից տարբերվող լեզուներով անձնագրի, ծննդյան և ամուսնության վկայականների դեպքում ներկայացվում է տվյալ փաստաթղթի պատճենը և դրա նոտարական վավերացմամբ թարգմանությունը:

**Նախարարի ժամանակավոր  
պաշտոնակատար՝**

**Ա. Աֆրիկյան**